ՋԱՎԱՀԻՐ ԹՈՐՈՍՅԱՆ
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոս,
պատմական գիտությունների թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ 1918–1920ԹԹ.

Այս հոդվածում մենք քննարկում ենք Հայաստանի առաջին հանրապետության տարածքային խնդիրները: 1918–1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետթայն կարևոր խնդիրներից են 1. իր ազգային, տարածքային սահմանների որոշումը, 2. այդ սահմանների միջազգային ճանաչումն ինչպես անմիջական հարևանների, այնպես էլ այլ երկրների կողմից, 3. սեփական պետության տարածքային ամբողջականության պահպանումն ինչպես զենքի ուժով, այնպես էլ դիվանագիտական ճանապարհով: Հայաստանի առաջին հանրապետության պատմությունն առաջին հերթին դրա սահմաններում ներառված տարածքների միջազգային ճանաչման համար մղված ռազմական ու դիվանագիտական պայքարի պատմությունն է, որում իրենց բացասական դերակատարումն են ունեցել ինչպես Հայաստանի անմիջական հարևանները՝ Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան, այնպես էլ եվրոպական խոշոր տերություններն ու Խորհրդային Ռուսաստանը: Նշենք, որ 1918–1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետության իշխանություններն ու հասարակական-քաղաքական մտքի տարբեր ուղղությունների ներկայացուցիչներն երբեմն պատշաճ հետևողականություն ու անհրաժեշտ դիվանագիտական հմտություններ չեն ցուցաբերել Հայաստանի սահմանների հարցում արդարացի լուծում գտնելու գործում: Ճիշտ է, ժամանակաշրջանը բարդ էր ու հակասական, սակայն մեր խորին համոզմամբ կուսակցական ու գաղափարական նեղ շահախնդրություններից վեր կանգնելու, ստեղծված իրավիճակը ճիշտ գնահատելու, կուռ միասնականություն հանդես բերելու և բացառապես ազգային շահերով առաջնորդվելու դեպքում, այնուամենայնիվ, հնարավոր էր գտնել արդարացի լուծումներ կամ, վատագույն դեպքում, ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալ գոնե շատ ավելի փոքր տարածքային կորուստներով:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սահմաններ, տարածքներ, համաձայնագիր, պայմանագիր, դիվանագիտություն, հիմնախնդիրներ, Հայաստանի Հանրապետություն, միջազգային ճանաչում:

Հայաստանի առաջին հանրապետության կարճատև, բայց պատմաքաղաքական իրադարձություններով հարուստ ժամանակահատվածը շարունակում է մնալ պատմաբանների և հասարակագետների ուսումնասիրության ոլորտում, թեև արտաքուստ այն տպավորությունն է, թե այս ժամանակաշրջանի վերաբերյալ նոր ասելիքներն ու գնահատականներն արդեն անհնար են: Իրականում այդպես չէ, քանի որ, անհրաժեշտություն կա առավել ամբողջական և ամփոփ ներկայացնել քննարկվող ժամանակաշրջանի թերևս ամենակարևոր հարցերից մեկը՝ Հայաստանի սահմանների ու դրանցում ներառված տարածքների հարցը:

Գաղտնիք չէ, որ ցանկացած նորաստեղծ պետության կարևոր խնդիրներից են 1. իր ազգային, տարածքային սահմանների որոշումը, 2. այդ սահմանների միջազգային ճանաչումն ինչպես անմիջական հարևանների, այնպես էլ այլ երկրների կողմից, 3.սեփական պետության տարածքային ամբողջականության

պահպանումն ինչպես զենքի ուժով, այնպես էլ դիվանագիտական ճանապարհով:

Նշված առումներով, անկասկած բացառություն չէր կարող լինել նաև 1918-1920 թթ.Հայաստանի առաջին հանրապետությունը: Թերևս սխալված չենք լինի ասել, որ Հայաստանի առաջին հանրապետության պատմությունն առաջին հերթին դրա սահմաններում ներառված տարածքների միջազգային ճանաչման համար մղված ռազմական ու դիվանագիտական պայքարի պատմությունն է, որում իրենց բացասական դերակատարումն են ունեցել ինչպես Հայաստանի անմիջական հարևանները՝ Վրաստանը, Ադրբեջանը, Թուրքիան, այնպես էլ եվրոպական խոշոր տերություններն ու Խորհրդային Ռուսաստանը:

Քննարկվող ժամանակաշրջանում ստորագրված Բաթումի և Սևրի պայմանագրերի, Թիֆլիսի ևերևանի համաձայնագրերի, ինչպես նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի ու դրանց նախորդած դիվանագիտական գործընթացների բազմակողմանի և անկողմնակալ վերլուծությունը՝ դրանից բխող ճիշտ եզրակացություններով, արդեն այսօր, մեր պետության առջև ծառացած բազում մարտահրավերների ֆոնի վրա առավել քան այժմեական է ու հրատապ, քանզի նոր սխալներ կամ բացթողումներ պատմությունը մեզ կարող է և չներել:

Կարծում ենք, ճշմարտության դեմ մեղանչած չենք լինի, եթե նշենք, որ պատմական օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքների բերումով մենք մեր պատմության ընթացքում, ցավոք, ավելի շատ տարածքային կորուստներ ենք ունեցել, քան նվաճումներ: Այս առումով-բացառություն չէ նաև մեր կողմից քննարկվող ժամանակահատվածը:

Քաջ գիտակցելով անաչառության կարևորությունը պատմական իրադարձությունները վերլուծելիս, ցանկանում ենք նշել, որ 1918-1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետության իշխանությունները ու հասարակական-քաղաքական մտքի տարբեր ուղղությունների ներկայացուցիչներն երբեմն պատշաճ հետևողականություն ու անհրաժեշտ դիվանագիտական հմտություններ չեն ցուցաբերել Հայաստանի սահմանների հարցում արդարացի լուծում գտնելու գործում: Ճիշտ է, ժամանակաշրջանը բարդ էր ու հակասական, սակայն մեր խորին համոզմամբ կուսակցական ու գաղափարական նեղ շահախնդրություններից վեր կանգնելու, ստեղծված իրավիճակը ճիշտ գնահատելու, կուռ միասնականություն հանդես բերելու և բացառապես ազգային շահերով առաջնորդվելու դեպքում, այնուամենայնիվ, հնարավոր էր գտնել արդարացի լուծումներ կամ, վատագույն դեպքում, ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալ գոնե շատ ավելի փոքր տարածքային կորուստներով:

Արցախյան հիմնախնդրի արդարացի լուծումը, հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն այսօր մեր նորանկախ պետականության առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրներից են, հիմնախնդիրներ, որոնց լուծումը մեզանից պահանջելու է լուրջ դիվանագիտական ջանքեր և անպայմանորեն ենթադրելու է նաև սահմանային ու տարածքային հարցերի վերանայում:

Անհրաժեշտ է նշել, որ խորհրդահայ պատմագրությունը, մասնավորապես Բաթումի, Սևրի և Ալեքսանդրապոլի պայմանագրերին իր անդրադարձերում, դատապարտել է դրանք և քննադատել ՀՀ ղեկավարությանը անհեռատես քաղաքականության համար: Եթե Բաթումի պայմանագիրը համարվել է ստրկական, Ալեքսանդրապոլինը՝ խայտառակ, ապա Սևրինն՝ անհեռատես, քանզի այդ պայմանագրով, ըստ խորհրդահայ պատմագրության, Հայաստանը կուլ էր գնում մեծ տերությունների խարդավանքներին: Դրա հետ միասին, չենք կարող չնշել նաև այն հանգամանքը, որ այս շրջանի աշխատություններում հաճախ

հանդիպում են ինչպես հարուստ փաստական նյութեր, այնպես էլ ճիշտհայեցակարգեր՝ քեմալաբոլշևիկյան հարաբերությունների և դրա հետևանքների վերաբերյալ:

Դրան հակառակ, սփյուռքահայ պատմագրությունը հիշյալ պայմանագրերից Բաթումինը համարել է թուրքերի կողմից պարտադրված, Սևրինը՝ քեմալաբոլշևիկյան դաշինքի արդյունքում ձախողված, Ալեքսանդրապոլինը՝ նույնպես պարտադրված:

Անհրաժեշտ է շեշտել, որ քննարկվող ժամանակահատվածում ստորագրված համաձայնագրերի ու պայմանագրերի գնահատման առումով հայ պատմագրության երկու թևերի մոտ էլ ծայրահեղ մոտեցումներ են եղել: Խորհրդահայ պատմագրության մեջ հաճախ հանդիպում է այն սխալ տեսակետը, թե իբր Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանի տարածքն ընդամենը 10.000կմ²էր[1]: Ասվածն ամենևին էլ չի համապատասխանում իրականությանը և, մեղմ ասած, «անտեղյակության» արդյունք է: Այսպես ՀԿԿ Կենտկոմի քարտուղար (իսկ 1922թ. փետրվարի 1-ից Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ.- Ջ. Թ.)Ս. Լուկաշինը 1922թ. հունվարի 26-ին ՀԿ(բ)Կ առաջին համագումարում ունեցած իր ելույթում նշում էր, որ «Մոսկվայի և Կարսի պայմանագրերը» գրեթե «Հին Ալեքսանդրապոլի պայմանագիրն են»[2]:

Ս. Ալիխանյանն իր աշխատություններում[3] անդրադարձել է հայ-ռուսական հարաբերություններին և ՀՀ նկատմամբ Ռուսաստանի որդեգրած քաղաքականությանը: Դրանցում նա քննադատության է ենթարկում ՀՀ արևմտամետ քաղաքականությունը և անվերապահորեն դրական գնահատում Ռուսաստանի դիրքորոշումը ՀՀ նկատմամբ: ՀՀ արտաքին քաղաքականությանն առնչվող հիշարժան աշխատությունների հեղինակ է Ա. Ա. Եսայանը[4]: Այս աշխատությունները գրված են ժամանակի ոգուն համապատասխան և հեղինակը հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության քննադատության դիրքերից՝ արևմտյան ուղղվածությունը համարելով «հանցավոր»: Հեղինակն անտեսում է այն ճշմարտությունը, որ ՀՀ-ն իր արտաքին քաղաքականության մեջ հակառուս չի եղել:

Առավել գնահատելի են հետխորհրդային շրջանի աշխատությունները, որոնցում ավագ սերնդի շատ խորհրդահայ պատմաբաններ վերանայել են իրենց նախկին հայեցակարգերը ինչպես Հայաստանի առաջին հանրապետության, այնպես էլ նրա կողմից ստորագրված պայմանագրերի վերաբերյալ: Դրանցից կուզենայինք առանձնացնել հատկապես Է. Զոհրաբյանի և Լ. Խուրշուդյանի ուսումնասիրությունները: Այս նույն ժամանակաշրջանում գրվել են նաև պատմագիտական նոր հայեցակարգերով աշխատություններ[5]:

Այդ նոր գնահատականները վերաբերում են նաև ստորագրված համաձայնագրերին և պայմանագրերին: Ոմանք դրանց անդրադարձել են մակերեսորեն, ոմանք՝ առավել խորությամբ: Հատկապես կարևոր է, որ նորովի են գնահատվել, մասնավորապես, քեմալաբոլշևիկյան հարաբերությունները՝ որոնց առավել խորացման պայմաններում էլ

1 Տես Հարությունյան Շ. Ռ., Հայ ժողովրդի պատմություն (1917-1968), հ. 4, Երևան, 1970, էջ 109:

2 Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) Ֆ. 1, ց. 2, գ.1, թ. 3:

3 Տես Ալիխանյան Ս., Խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917–1921թթ.), Երևան, 1964, նույնի՝ Գ. Կ. Օրջոնիկիձեն և Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1974:

4 Տես, Եսայան Ա. Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1985, նույնի՝ Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920-1922), Երևան, 1967:

5 Տես Զոհրաբյան Է. Ա., 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, նույնի՝ Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ), Երևան, 2002, Խուրշուդյան Լ. Ա., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, նույնի՝ Հայկական հարցը, Երևան, 1995 և այլն:

ստորագրվեցին ՀՀ տարածքներին ու սահմաններին վերաբերող պայմանագրերը:

Հետխորհրդային շրջանում ստեղծված աշխատություններում փոխվել են գնահատականները՝ կապված Ալեքսանդրապոլի պայմանագրի հետ: Նախկինում այն համարվում էր խայտառակ, դաշնակցականների կողմից Հայաստանը Թուրքիային զոհաբերող և այլն: Բացի այդ, գրեթե չէր խոսվում ՀՀ իշխանություններին բոլշևիկների կողմից պարտադրված Երևանի համաձայնագրի մասին, որին նորովի անդրադարձներն հիշյալ աշխատություններում արդեն առկա են:

Կարևոր է նաև, որ հետխորհրդային պատմագրության մեջ նոր գնահատականի է արժանանում Սևրի պայմանագիրը, որի նկատմամբ միանգամայն այլ մոտեցումներ ուներ խորհրդահայ պատմագրությունը: Նախ՝ շատ քիչ էր խոսվում այդ պայմանագրով նախատեսված ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանի Հանրապետությանը տրվելիք տարածքների մասին: Բացի այդ, կարծում ենք հասկանալի պատճառներով, չէին մատնանշվում Սևրի պայմանագրի ձախողման պատճառները: Դրանով հանդերձ հարկ է արձանագրել նաև, որ այս պայմանագրին հետխորհրդային հայ պատմագրության անդրադարձերում էլ հաճախ ծայրահեղացվում է ինչպես դրա, այնպես էլ Վիլսոնյան իրավարար վճռի գնահատականը և վերջապես չի տրվում այն հարցի պատասխանը, թե արդյո±ք իրականանալի էր այդ տարածքներով Հայաստանն՝ անկախ Սևրի պայմանագրի չիրականացման գործում քեմալաբոլշևիկյան դերակատարությունից:

Սփյուռքում լույս տեսած, մասնավորապես, դաշնակցական գրականության մեջ Սևրի պայմանագրի և Թիֆլիսի համաձայնագրի ձախողման, դեկտեմբերի 2-ին ստորագրված Երևանի համաձայնագրի չիրականացման, Ալեքսանդրապոլի պայմանագրի պարտադրման մեղքը գերազանցապես բարդվում է բոլշևիկների վրա՝ անտեսելով դրանցում սեփական սխալներն ու բացթողումները:

Այլ էր Բաթումի պայմանագրի խնդիրը: Դրան վերաբերող թեԲ խորհրդային, թեԲ հետխորհրդային և թե՛ սփյուռքում լույս տեսած աշխատություններում Հայաստանին պարտադրված սահմանների հարցում մեղադրվում են թուրքերը:

Հայաստանի սահմաններն ու դրանցում ներառված տարածքները ճշգրտելու տեսանկյունից շահեկանորեն առանձնանում է Կ. Խաչատրյանի՝ Գ. Բաղալյանի համահեղինակությամբ հոդվածը և կից քարտեզը[1], որտեղ հեղինակները քարտեզագրական կոնկրետ նյութի ու հաշվարկների հիման վրա նշում են, որ 1920թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ հոդվածով «նորահռչակ Խորհրդային Հայաստանի համար նախատեսված տարածքը պետք է կազմեր ավելի քան 43000 քառ. կմ»[2]: Բացի այդ հոդվածում միանգամայն իրավացիորեն այն տեսակետն է արտահայտվում, որ Երևանի համաձայնագիրը «հանդիսացավ անդրանիկ միջազգային փաստաթուղթը, որում նշված է հայկական մի շարք տարածքների՝ ՀՍԽՀ-ին «անվիճելի կերպով» պատկանելու մասին»[3]: Պակաս արժեքավոր չէ նաև Ա. Պապյանի հոդվածների ժողովածուն: Դրանցում տեղ գտած որոշ հոդվածներում հեղինակը միջազգային իրավունքի նորմերին համապատասխանության տեսանկյունից քննական վերլուծության է ենթարկում Բրեստ-Լիտովսկի, Սևրի, Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը և կատարում, մեր կարծիքով, շատ արժեքավոր եզրակա-

1 Տես Խաչատրյան Կ., Բաղալյան Գ., ՀՍԽՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թվականի դեկտեմբեր-1922 թվականի սկիզբ), Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ173-197:

2 Նույն տեղում, էջ185:

3 Նույն տեղում, էջ 174:

ցություններ, մասնավորապես այն, որ այդ պայմանագրերը բացի Սևրից, անօրինական են ոչ միայն այն պատճառով, որ դրանց կնքողները կամ կնքողներից մեկը միջազգային իրավունքի սուբյեկտ չէր հանդիսանում, այլ նաև այն առումով, որ դրանք կնքած կողմերից մեկի նկատմամբ մյուսի կողմից կիրառվել է ուժ, կամ ուժի գործադրման սպառնալիք: Այս դեպքում ևս միջազգային պայմանագիրն անօրինական է՝ համաձայն միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թվականի Վիեննայի համաձայնագրի 52-րդ հոդվածի:

Բացի վերը նշվածից, փորձել ենք քննադատական մոտեցում ցուցաբերել խորհրդային, իսկ առանձին դեպքերում՝ նաև հետխորհրդային հայ պատմագիտության մեջ տարածում գտած այնպիսի մի արտահայտությաննկատմամբ, ինչպիսին «վիճելի տարածքներ» արտահայտությունն է, որն իրականում վերաբերում է բուն հայկական տարածքներին՝ Ջավախքին, Լոռուն, Զանգեզուրին, Նախիջևանին, Ղարաբաղին և այլն: Մեր կարծիքով, այսուհետև այդ արտահայտության փոխարեն պետք է կիրառել «հարևան Վրաստանի և Ադրբեջանի տարածքային հավակնությունները հայկական տարածքների՝ Ջավախքի, Լոռու, Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի նկատմամբ» արտահայտությունը քանզի օգտագործելով «վիճելի տարածքներ» արտահայտությունը, մենք ակամա կասկածի տակ ենք դնում դրանց բուն հայկական լինելու հանգամանքը: Ճիշտ է 1918-1920 թթ. ՀՀ իշխանությունները թույլ տալով լուրջ սխալ համաձայնվում էին «վիճելի տարածքներ» ձևակերպման հետ, սակայն դա, մեր խորին համոզմամբ, ամենևին էլ չի նշանակում, թե մենք չպետք է քննադատենք նման մոտեցումն ու այսօր էլ շարունակենք օգտագործել այդ արտահայտությունը:

Բացի այդ, նույն մոտեցումներով այն տեսակետներն ենք հիմնավորել, որ փոքր հաջողությունների հետ միասին եղել են նաև ձախողումներ, քանի որ չափազանց մեծ են եղել հայության ղեկավար շրջանակների քաղաքական ցանկությունները նոր կազմավորվող պետության համար և հիմնականում անտեսվել է այն ճիշտ ըմբռնումը,որ սահմանները պահանջվում ու պարտադրվում են ելնելով դրանք պահելու հնարավորություններից: Եթե տարածքներն ընդարձակվում են զենքի ուժով և պահպանվում, ապա, ի վերջո, վավերացվում են: Դրա վկայություններն են 1918 թվականի մայիսյան հերոսամարտերը, 1919-1921թթ. Զանգեզուրի գոյամարտը և, վերջապես, դրա փայլուն օրինակն է անցած դարի 90-ական թթ. սկզբների Արցախյան ազատագրական պատերազմը:

Հայաստանի առաջին հանրապետության սահմաններն ըստ պայմանագրերի և համաձայնագրերի ճշգրտելուց և դրանց ստորագրմանը նախորդած ու ձախողմանը նպաստած պատմաքաղաքական գործընթացները վերլուծելուց հետո, անհրաժեշտ ենք համարում կատարել հետևյալ հիմնական եզրակացությունները:

Առաջին՝ Բաթումում Հայաստանի անկախությունը թուրքերը ճանաչեցին միանգամայն անորոշ տարածքների վրա, անկախ նրանից, որ Բաթումի պայմանագրով մատնանշվեց Անդրկովկասյան հանրապետությունների և Թուրքիայի միջև սահմանագիծը: Բաթումի պայմանագիրն անվավեր է, քանի որ այն այդպես էլ չի վավերացվել նախատեսված մեկամսյա ժամկետում:

Երկրորդ՝ Սևրի պայմանագրի ստորագրումից հետո մեզանում դեռևս պահպանվում էին մեր պատմական տարածքների վերադարձման հույսերը, չնայած այն բանին, որ այդ պայմանագրով Հայաստանի տարածքներն ու սահմանները հստակ չէին նշվում, այլ ընդամենը շեշտվում էր Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթնե-

ռով Թուրքիայի և Հայաստանի միջև «սահմանատման» համաձայնության մասին, որը պետք է որոշեր ԱՄՆ-ն:

Երրորդ՝ Ա. Խատիսյանը Ալեքսանդրապոլի պայմանագիրն ստորագրել է՝ հասկանալով, որ այդպես է ուզում նոր իշխանությունը: Այդ պայմանագրով նախատեսված սահմանները նախորոշված են եղել, բայց դրա ստորագրումը բոլշևիկները ցանկացել են իրականացնել նախկին իշխանության պատվիրակության ձեռքով՝ պատասխանատվությունը գցելով նրա վրա: Անհնար է որոշել, թե Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանը փաստացի քանի քառ. կմ էր կազմում, որովհետև ճշտված չէր Նախիջևանի և Զանգեզուրի միջև եղած սահմանը, Զանգեզուրն անկախ քաղաքական միավոր էր և գտնվում էր Նժդեհի իշխանության տակ, բացի այդ Ալեքսանդրապոլի գավառը և Կարսի մարզից հատկացվելիք տարածքները մնում էին թուրքերի կողմից ռազմակալած: Ճշտված չէր նաև հայ-վրացական սահմանը: Փաստորեն Ալեքսանդրապոլի պայմանագրով էլ ոչ մի այսպես կոչված «վիճելի տարածքի» խնդիր չէր կարգավորվում:

Չորրորդ՝ Հայաստանի տարածքային ու սահմանային խնդիրների լուծման հարցում Հայաստանի Հանրապետության ղեկավար շրջանները երբեմն այնքան ակտիվ չէին, որքան պահանջում էր ստեղծված իրադրությունը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ոչ միշտ էր անհրաժեշտ նախաձեռնություններ հանդես բերում և հաճախ հանդես էր գալիս պասսիվ դիտորդի դերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Շ. Ռ., Հայ ժողովրդի պատմություն (1917-1968), հ. 4, Երևան, 1970, էջ 109:
2. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) Ֆ. 1, ց. 2, գ.1, թ. 3:
3. Ալիխանյան Ս., Խորհրդային Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921թթ.), Երևան, 1964, նույնի՝ Գ. Կ. Օրջոնիկիձեն և Խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1974:
4. Եսայան Ա. Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1985, նույնի՝ Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920-1922), Երևան, 1967:
5. Զոհրաբյան Է. Ա., 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, նույնի՝ Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր-1920 թ. ապրիլ), Երևան, 2002, Խուրշուդյան Լ. Ա., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, նույնի՝ Հայկական հարցը, Երևան, 1995 և այլն:
6. Խաչատրյան Կ., Բաղալյան Գ., ՀՍԽՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թվականի դեկտեմբեր-1922 թվականի սկիզբ), Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ173-197:

ВОПРОС АРМЯНСКИХ ТЕРРИТОРИЙ 1918-1920 ГГ

ДЖАВАИР ТОРОСЯН

Преподаватель Национального аграрного университета Армении, кафедры философии и истории, кандидат исторических наук

Из важных вопросов первой Республики Армения 1918-1920гг. являются: 1. Установление своих национальных, территориальных границ, 2. Международное признание этих границ как своими непосредственными соседями, так и другими странами, 3. Сохранение территориальной целостности своего государства как силой оружия, так и путем дипломатии. История первой Республики Армения в первую очередь – история военной и дипломати-

ческой борьбы за международное признание территорий, включенных в ее границы. Где свое отрицательное влияние имени как непосредственные соседи Армении – Грузия, Азербайджан, Турция, так и крупные Европейские государства и Советская Россия. Отметим, что представители властей первой Республики Армения 1918-1920гг. и разных направлений общественно-политической мысли иногда не проявляли надлежащей последовательности и необходимых дипломатических навыков в деле нахождения справедливого решения в вопросах, касающихся границ Армении.

Правда, эпоха была сложной и противоречивой, но по нашему глубоко,у убеждению, в случае становления выше узких партийных и идейных интересов, правильной оценки сложившейся ситуации, проявления крепкого единства и руководствования исключительно национальными интересами, тем не менее, возможно было бы найти справедливые решения, или, в худшем случае, выйти из тяжелой ситуации хотя бы с меньшими территориальными потерями.

THE ISSUE OF ARMENIAN TERRITORIES OF 1918-1920

JAVAHIR TOROSYAN

Lecturer of the Chair of Philosophy and History National Agrarian University of Armenia, Candidate of Historical Sciences

Of the important issues of the first Republic of Armenia of 1918-1920-ies are the follows: 1. establishment of their national, territorial borders, 2. International recognition of these borders as by their immediate neighbors as well by other countries, 3. Preservation of the territorial integrity of their state both by force of arms and through diplomacy. The history of the first Republic of Armenia is, first of all, the history of the military and diplomatic struggle for international recognition of the territories included in its borders, where its negative influence had both Armenia's immediate neighbors - Georgia, Azerbaijan, Turkey, and the major European states and Soviet Russia. It should be noted that the representatives of the authorities of the first Republic of Armenia of 1918-1920-ies and different directions of socio-political ideas sometimes did not show proper consistency and the necessary diplomatic skills in finding a just solution in matters relating to the borders of Armenia.

True, the era was complicated and contradictory, but in our deep conviction, in the event of standing above narrow party and ideological interests, a correct assessment of the current situation, manifestation of a strong unity and guidance exclusively by national interventions, it would nevertheless be possible to find good solutions, or, in the worst case, get out of a difficult situation with at least smaller territorial losses.